**Արձանագրություն N 2**
**ՋԿ-ԲՄԱՇՁԲ-23/5-Ա ծածկագրով բաց մրցույթի**
**գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 10 հուլիսի 2023թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Է. Բադալյանը, Ա. Սիմոնյանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Հայտերի բացման վերաբերյալ**

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Արաքսավան և Բուրաստան համայնքների Արաքս գետի N 16-ից մինչև N 14 սահմանային նշանների միջակայքում գետի նախկին հունի վերականգնման և N 16 սահմանանշանի մոտակայքում Արաքս գետի հայկական կողմի մոտ ողողված պատնեշի վերականգնման աշխատանքների ձեռքբերման ՋԿ-ԲՄԱՇՁԲ-23/5-Ա ծածկագրով բաց մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2023 թվականի հունիսի 26-ին, ժամը 16:00-ին:

**ՋԿ-ԲՄԱՇՁԲ-23/5-Ա ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակիցը (ները)**

| Մասնակցի անվանումը | հասցե, հեռախոսահամար | Էլեկտրոնային հասցե |
|---|---|---|
| «ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ | Ք. Երևան 0054, Դավթաշեն 1 թաղ., 32շ., բն. 22, հեռ 033 500555 | exikjan@mail.ru |
| «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ | ՀՀ Արարատի մարզ, գ. Բերքանուշ, հեռ. 098 041003 | husalishinarar@mail.ru |
| «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 112, հեռ. 099 245557, 096 301080 | rafojakh@gmail.com |
| «Արհովշին» ՍՊԸ | ՀՀ Արարատի մարզ, Սայաթ-Նովա համայնք, Մասիս-Ռանչպար խճ.3 հեռ.077 712488 | arhovshin.llc@mail.ru |
| «Արփա – Սևան» ԲԲԸ | ք. Երևան, Վ. Վաղարշյան 20 հեռ,_012 211111 | info@arpa-sevan.am |

## Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

| հ/հ | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| **Չափաբաժին 1**<br>**Գնման գին – 378 251 200 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)**<br>Գետերի ափերի պաշտպանության աշխատանքներ – ՀՀ Արարատի մարզի Արաքսավան և Բուրաստան համայնքների Արաքս գետի N 16-ից մինչև N 14 սահմանային նշանների միջակայքում գետի նախկին հունի վերականգնման և N 16 սահմանանշանի մոտակայքում Արաքս գետի հայկական կողմի մոտ ողողված պատնեշի վերականգնման աշխատանքներ | | | | |
| 1 | «ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ | 250 244 568 | 50 048 914 | 300 293 482 |
| 2 | «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ | 259 891 665 | 51 978 333 | 311 869 998 |
| 3 | «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ | 293 172 600 | 58 634 520 | 351 807 120 |
| 4 | «Արհովշին» ՍՊԸ | 315 000 000 | 63 000 000 | 378 000 000 |
| 5 | «Արփա – Սևան» ԲԲԸ | 374 989 229.51 | 74 997 845.9 | 449 987 075.41 |

## Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԲՄԱՇՁԲ-23/5-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցները հայտով ներկայացրել են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Մասնակիցներ «ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊ, «Ռաֆ-Օջախ» ՍՊ, «Արհովշին» ՍՊ և «Արփա – Սևան» ԲԲ Ընկերությունները հայտի ապահովումը ներկայացրել են բանկային երաշխիքի ձևով և հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել են հայտի ապահովման բանկային երաշխիքների բնօրինակները: Մասնակից «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական հաշվին կանխիկ փողի վճարման ձևով: Հայտի ապահովման իսկությունը հավաստելու նպատակով Ջրային կոմիտեն 28.06.2023թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը: ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.06.2023թ. գրությամբ հավաստել է «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման իսկությունը:

Մասնակից «Արփա-Սևան» ԲԲԸ-ի գնային առաջարկը գերազանցում է գնման գինը:

ՋԿ-ԲՄԱՇՁԲ-23/5-Ա ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակիցների ներկայացրած հայտերի ուսումնասիրության արդյունքում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները.

Մասնակից «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում լրացված չեն աշխատանքների «Միավորի արժեքը» և «Ընդհանուր արժեքը» սյունակները և բաժինների կշիռները:

Մասնակից «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի 1.16, 1.28 և 2.11 տողերում «քանակ» սյունակի թիվը չի համապատասխանում հրավերի ծավալաթերթով պահանջվող «քանակին»:

Մասնակից «ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում լրացված չէ «Չնախատեսված ծախսեր 1.5%» տողը:

Մասնակից «Արփա-Սևան» ԲԲԸ-ի հայտով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում «Միավորի արժեքը» և «Ընդհանուր արժեքը» սյունակները ներկայացված են հազ. դրամով, իսկ սյունակների թվերը լրացված են դրամով, որի արդյունքում ծավալաթերթով ներկայացված գինը չի համապատասխանում Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկին:

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերի գնահատող հանձնաժողովը որոշել է՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակիցներ «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ին, «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ին, «ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին և «Արփա-Սևան» ԲԲԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը (04.07.2023թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում մասնակիցներ «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ-ն, «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն, «ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն և «Արփա-Սևան» ԲԲԸ-ն շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

**Հանձնաժողովի որոշումը**

---

ՋԿ-ԲՄԱՇՁԲ-23/5-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԲՄԱՇՁԲ-23/5-Ա ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին,
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԲՄԱՇՁԲ-23/5-Ա ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԲՄԱՇՁԲ-23/5-Ա ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «ԱՍ ՇԻՆ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | ______________ | Ս. Ասրյան |
| անդամներ | ______________ | Է. Բադալյան |
| | ______________ | Ա. Սիմոնյան |
| | ______________ | Ս. Աբազյան |
| Քարտուղար | ______________ | Ա. Սարգսյան |